

ապաստանք՝ յուսային պահել զվիճակս իւրեանց: Այսոքիկ էին ժայռք դժուարամատոյցք ՚ի ծաւալական պետութեան Լեւոնի, զորս հարկ էր նմա՝ ըստ դիտման իւրում հարթ հաւասար առնել. եւ առ այս պէտք էին խորագիտութեան եւ պնդութեան: Ոչ յիշէ պատմութիւն յանուանէ զայսպիսիս, բայց ՚ի միոյ կամ յերկուց, եւ յայտ է թէ շատք, եթէ գոյին, կամաւ յանձն առին փոխանակ կայսեր՝ նմա մատուցանել հնազանդութիւն, ոչ այնքան ՚ի հեռաւոր տկար ձեռանէն անկասկածք, որքան ՚ի մերձաւոր հզօրէն պակուցեալք: Մնայր միայն յայտնի ազատասէր՝ ամուրն Լամբրուն, որ բազում անգամ նեղեալ եւ պաշարեալ՝ տոկաց տեւեաց ընդդէմ բռնութեան Ռուբինեանց. եւ ոչ ինքն իսկ Լեւոն վստահացաւ պատերազմական հնարիւք խոնարհեցուցանել զայնպիսի բարձրութիւն. այլ զառաջինն երկուստեք կասկածն եւ պատշաճ՝ ՚ի հաւանութիւն ածին զՊարոնայց պարոնն՝ ընդ ազնուագունին Պարոնայց՝ Հեթմոյ (տեառն Լամբրունի), զոր կանխաւ եւս եղբայր նորին Հեթմոյ՝ աւագատեսն Ներսէս՝ ՚ի թղթեանն եւ ՚ի յիշատակարանս՝ խոստովանէր տէր եւ թագաւոր իւրեանց: Ապա չկայր յայնժամ իւէթ մեծ առ արտաքին երեսս՝ եւ յայսմ կողմանէ, եւ մարթ էր ժամանակաւ իսպառ փարատել զայն, որպէս եւ արարն Լեւոն, ըստ որում տեսցի յետոյ:

Արդ այսպէս ՚ի դէպ է ասել, եթէ յառաջին ամս պայագատութեանն, տիրաբար տարածանէր Լեւոն զձեռս իւր ՚ի դրանց Սելեւկիոյ մինչեւ ՚ի դրունս Անտիոքայ, եւ ՚ի ծովեզերաց այնր երկայնութեան՝ մինչեւ ՚ի Տաւրոս եւ յԱնտիտաւրոս, հատանելով զաշխարհս Պամփիլիոյ, Իսաւրիոյ, Լիկայոնիոյ, Կադաոնիոյ եւ Գերմանիկիոյ. ամենեքեան որ ՚ի նոսին մեծ եւ փոքր իշխանք եւ տեարք՝ հնազանդութիւն մատուցանէին նմա, որ շատ որ սակաւ, այլ զնա ճանաչէին վեհագոյն տէր երկրին:– Ի սոցին սակի համարելի են եւ գլխաւորք եկեղեցւոյ, եպիսկոպոսունքն, եթէ գոյին եւ ՚ի նոսա՝ որպէս յետոյ՝ տեարք վիճակաց եւ կալուածոց. հասարակաց էր հրահանգ օրինին. եւ որպէս երեւեցաւ ՚ի դէպս ինչ ՚ի հարստութեան Բագրատունեաց՝ գերիշխանութիւն թագաւորին՝ յընտրութեան եւ յընկեցման հայրապետի, եւ ՚ի խնդիրս որ յայն սակս, զնոյն եւ Լեւոն յանձին բերէր եւ յառաջ իսկ քան զթագաւորութիւնն, թէ եւ փոքր ինչ մասն երկրի էր նորա՝ առ ընդարձակութեամբ աշխարհաց՝ յոր սփռեալ էին ժողովուրդք եւ եպիսկոպոսունք ազգին՝ ընդ այլ եւ այլ պետութեամբք. այլ զի ինքն էր աւագագոյն քան զամենայն հայ իշխանս ժամանակին, ուր ուրեք